ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.11.2019
343-76

ՀՀ Վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանին

Հարցման պատճենները՝
Շրջակա միջավայրի նախարար պարոն Է. Գրիգորյանին,
Քաղաքաշինության կոմիտեի նախագահ պարոն Վ. Վերմիշյանին,
Երևանի քաղաքապետ պարոն Հ. Մարությանին,
«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար պարոն Վ. Մացակյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Մեծարգո պարոն Վարչապետ,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն է դիմել «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» հասարակական կազմակերպության խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Դալմայի այգիներին առնչվող տեղեկություն ստանալու նպատակով ս.թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին ՀԿ-ն Երևանի քաղաքապետարան, Քաղաքաշինության կոմիտե և «Հայանտառ» ՊՈԱԿ ուղարկել է հարցումներ, որոնց ի պատասխան ստացված գրություններով չեն տրամադրվել պահանջվող տեղեկությունները, ավելին, տրամադրված պաշտոնական գրությունները պարունակում են հակասական տվյալներ խնդրո առարկայի վերաբերալ (պատասխան գրությունները կցվում են):

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել Ձեր հանձնարարությունը հետևյալ տեղեկություններն ամբողջական և լիարժեք տրամադրելու վերաբերյալ.

1. Որքա՞ն է կազմում Դալմայի այգիների տարածքից «Հայանտառ»-ին, որպես անտառային նշանակության հողեր, փոխանցված հողատարածքի մակերեսը: Որտե՞ղ են կոնկրետ տեղակայված այդ հողերը:
2. Ի՞նչ աշխատանքներ են իրականացվել պատկան պետական մարմինների և «Հայանտառ»-ի կողմից՝ «Հայանտառ»-ին փոխանցված տարածքում անտառհիմնման և/կամ անտառվերականգնման ուղղությամբ:
3. Ի՞նչ Ծրագրեր են իրականացվում և նախատեսված այդ տարածքների կառուցապատման կամ այլ նպատակով օգտագործման վերաբերյալ:

4. Ընդգրկվա՞ծ են արդյոք մեր կողմից վերը հիշատակված տարածքում ակտիվ կերպով ընթացող կառուցապատումները Երևանի Գլխավոր հատակագծում (ե՞րբ և ի՞նչ ընթացակարգով):
5. Ե՞րբ և կոնկրետ ո՞ւմ կողմից են արված այդ կառուցապատումների ՇՄԱ (շրջակա միջավայրի վրա ազդեցության) գնահատումն ու փորձաքննությունը:
6. Որտե՞ղ կարող ենք ծանոթանալ դրանց վերաբերող՝հատկապես ռելիեֆի ու լանդշաֆտի փոփոխության կապակցությամբ տրված փորձաքննական դրական եզրակացություններին:
7. Ի՞նչ տեղեկություններ կան Երևանի Դալմայի այգիների վերաբերյալ՝ որպես պատմա-մշակութային կամ որպես Բնության Հուշարձան:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան